

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Մարքսի ծննդյան 165 և մահվան 100-ամյակի առիթով)

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գիտական կոմունիզմի հիմնադիր, մեծ մտածող ու հեղափոխական Կարլ Մարքսը մարդկությանն ավանդել է զրական հարուստ ժառանգություն, որը աշխարհի կոմունիստների, առաջավոր մարդկության գաղափարական հզոր զենքն է։ Հիսուն մեծագիր հատորներով, ուսերեն լեզվով լույս է տեսել Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի «Երկերի ժողովածուն» (Երկրորդ հրատարակություն), որտեղ գտնվում են սովետական ընթերցողին մինչև այդ անհայտ շուրջ 800 աշխատություն և 700 նամակ։ Մոսկվայի ու Բեռլինի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտները համատեղ իրականացնում են 100 հատորանոց հրատարակությունը, որի առաջին 20 հատորները արդեն հասել են ընթերցողներին։ Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի աշխատությունները միայն Սովետական Միությունում 1917—1982 թթ. տպագրվել են շուրջ 100 լեզվով (այդ թվում օտար լեզուներով) 3500 անգամ, 150 միլիոն օրինակ տպաքանակով։ Միայն «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» հրատարակվել է 552 անգամ, 37 միլիոն օրինակ տպաքանակով։ Դեռևս Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի կենդանության ընթացքում աշխատությունները աշխարհում ամենատարածված սոցիալիստական երկերն էին։ Ֆ. էնգելսը 1888 թ. հունվարին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստին» անգլերեն հրատարակության առաջաբանում գրել է. «Մանիֆեստին» պատմությունը նշանակալի չափով արտացոլում է արդի բանվորական շարժման պատմությունը, ներկայումս նա անկասկած ամբողջ սոցիալիստական գրականության ամենատարածված, ամենից ավելի միջազգային երկն է, միլիոնավոր բանվորների կողմից ճանաչված ընդհանուր ծրագիրը՝ Սիրիից մինչև Կալիֆոռնիան»¹։

Հայն մասնաշաղկապություն ստացավ Կ. Մարքսի գլուխգործոցը՝ «Կապիտալը», որի առաջին հատորը միայն 1867—1895 թթ., մինչև Ֆ. էնգելսի մահը, լույս է տեսել 17 անգամ ութ երկրներում, ինքը լեզուներով, այդ թվում՝ գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, լեհերեն, ղանիերեն, իտալերեն, իսպաներեն, անգլերեն, հոլանդերեն²։ Կ. Մարքսի կենդանության ժամանակ հրատարակվել են «Կապիտալի» առաջին հատորի միայն ռուսերեն և ֆրանսերեն թարգմանությունները։

Մարքսիզմի սարածումը Ռուսաստանում պայմանական օրինաչափ պրոցես էր։ Կ. Մարքսի և նրա գիտակիցների երկրների, սոցիալիստական գրականության թարգմանության, ինչպես և մարքսիստական ինքնուրույն աշխատությունների հրատարակման գործում աչքի ընկնող դեր խաղաց Գ. Պլեխանովի հիմնադրած Ռուսաստանի մարքսիստական անդրանիկ կազմակերպությունը՝ Աշխատանքի ազատագրության խումբը։ Իր ակունքներն առնելով «Աշխա-

¹ Կ. Մարքս և Ֆ. էնգելս. Կոմունիստական կուսակցության մանիֆեստը. Երևան, 1973, էջ 27։

² Տե՛ս Ա. Վ. Ուրոևա. Գիրք, որ դարձել է ապրում. Երևան, 1968, էջ 8։

տաների աղատագրության» խմբից, մտքբխտական շարժումը Վ. Ի. Լենինի Հիմնադրած Պետերբուրգի «Բանվոր դատակարգի աղատագրության պայքարի միություն» և այլա ՌՍԴԲԿ առաջին ջոկատների, Լենինյան «Իսկրայի» միջոցով տարածվեց լուսավորակ Ռուսաստանում և նրա ծայրամասերում։ Բոլշևիկները, ով ձևավորվեց ուժնուն տարի առաջ ՌՍԴԲԿ 11 համագումարում, Վ. Ի. Լենինի բնութագրությամբ առաջացավ մտքբխտի սկսություն հաստատուն հիմքերի վրա։

Ավելի քան հարյուր տարի է, ինչ հայ ժողովուրդը հաղորդակից է Կ. Մարքսի աշխատություններին, նրա դրական-տեսական ժառանգությանը։ Ռուսաստանի կյանքում առաջացած սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխությունների ազդեցության շնորհիվ նոր փուլ է թևակոխում հայ ժողովրդի աղատակական պայքարը, որը մինչ սոցիալ-դեմոկրատիայի ծրարականը ընթանում էր դեպքումների, որոնումների և մաքառումների ճանապարհով։


1880-ական թթ. սկսած ցարական ոստիկանության և գրաքննության խրատագույն սահմանափակումների պայմաններում Կարլ Մարքսի աշխատությունները աստիճանաբար թափանցում են հայ իրականության։ Սկզբնական շրջանում դրանք դերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն հրատարակություններ էին, որ իրենց հետ Անդրկովկաս ու Հայաստան էին բերում։ Եվրոպայում և Ռուսաստանում սովորող հայ առաջադեմ երիտասարդները Անտոնովսկու նրանք կատարեցին Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի աշխատությունների և կոմունիստական դրականության թարգմանության նախափորձերը։ Հայ իրականության մեջ 1880-ական թթ. սկսած պարբերական մամուլում, ինչպես օրինակ, «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Արևելյան մամուլ» և այլ տպագիր օրգաններում, թեկուզ և թույլ չափով, արձագանք են գտնում Առաջին ինտերնացիոնալի և Փարիզի կոմունայի գործունեությունը, քաղվածքներ են տպագրվում Կ. Մարքսի երկերից։

Առաջին ինտերնացիոնալի գործունեության վերաբերյալ հոգվածներ է տպագրել «Մշակը», իսկ Փարիզի կոմունայի մասին՝ «Մեղու Հայաստանին»։ «Մշակի» առաջին տարվա՝ 1872 թ. մարտի 30-ի և ապրիլի 13-ի համարներում «Եվրոպայի աշխատողների ընկերությունը» խորագրով ծավալուն հոգվածաշարում խոսվում է Առաջին ինտերնացիոնալի հիմնադրման, նրա աշխատանքի, «Հիմնադիր Մանիֆեստի» և խնդիրների մասին։ Հոգվածը սկսվում է պրոլետարիատի առաջացման պատմությամբ։ «Հիմնադիր Մանիֆեստի» ոգով շարադրված են երկու հակամարտ դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի ներհակությունները, ընդգծված, որ սրանք «հասարակության երկու ծայրահեղ բևեռներն են. երկու դասակարգեր, որոնց մեջ կա անդադար կոխվող գոյության համար»³։ Միաժամանակ խոսվում է առաջին ինտերնացիոնալի ստեղծման նախադրյալների և հիմնադրման պրոցեսի, բանվոր դասակարգի միասնության անհրաժեշտության և այլ պրոբլեմների մասին։ Հոգվածագիրը համակրանքով է արտահայտվում Ինտերնացիոնալի ազգային սեկցիաների, բանվորական շարժման ակնավոր գործիչներ Ալգուստ Բեբելի, Վիլհելմ Լիբկնեխտի և այլոց մասին, ընդգծում, որ «Առաջին ինտերնացիոնալը բանվորական շարժման մեծ գործի փոքրիկ սեղմն է, որը աճելով մեծ հունձ կտա։ Ինչ որ Եվրոպայի մշակները արին Լոնդոնի համաշխարհային հանգեսից հետո (խոսքը Ինտերնացիոնալի առաջին կոնգրեսի մասին է), ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ մի փոքրիկ սերմ այն ընկերության, որ այժմ այնպիսի անհանգստություն է պատճառում Եվրոպական կառավարություններին և նյութական ապահովության տեղ մարդկանց»⁴։

«Մեղու Հայաստանի» թերթը նույնպես, հակառակ իր գաղափարական դավանանքի, տեղ է տվել այնպիսի հոգվածների, որոնցում համակրանքով է խոսվում Փարիզի կոմունայի մասին։

³ «Մշակ». № 13, 30 մարտի 1872։

⁴ «Մշակ». № 15, 13 ապրիլի 1872։ Տե՛ս նաև «Արևելյան մամուլ», 1872, № 4, էջ 171—174. № 5, էջ 227—232. № 6, էջ 283։ «Մասիս». 1871, № 1093, 27 մայիսի. № 1099, 10 հունիսի։



Կ. Մարքսի աշխատությունների հայերեն ատաղին թարգմանությունների պատմությունը առնչվում է «Աշխատանքի ազատագրություն» խմբի գործունեության, նրա «Ժամանակակից սոցիալիզմի գրադարան» մատենաշարի թողարկումների հետ։ Այդ ասպարեզում ուշագոսվ է հայ ատաղին սոցիալ-դեմոկրատներից մեկի՝ Գևորգ Ղարաջյանի (Ս. Տ. Արկումեդ) ծառայությունը։ 1886 թ. ժնկում նա ծանոթանում է Գ. Պլեխանովի հետ։ Մինչ այդ, Ֆրանսիայում ձեռք էր բերել Կ. Մարքսի «Կապիտալի» ատաղին հատորը ֆրանսերեն լեզվով, որի «ընթերցումը,—գրել է Գ. Ղարաջյանը,— այն ազդեցությունն

ունկցավ, ինչպիսի ազդեցություն կարող էր ունենալ կույրի վրա մի տեսակ հրաշքով նրա աչքերի բացումը»⁵։

1886 թ. մինչև 1889 թ. աշունը Գ. Ղարաջյանը քաղաքական գործարար հանդիպումներ է ունենում «Աշխատանքի ազատագրության» խմբի անդամներին, հատկապես Գ. Պլեխանովին, Վ. Զասուլիչի և մասամբ էլ Պ. Աքսելրոդի հետ։ Այդ հանդիպումներն էլ բախտորոշ եղան նրա կյանքում, նա թողնեց հնչակյանների ուղեգիրը և հարեց մարքսիզմին։ Հենց այդ ժամանակ էլ Գ. Ղարաջյանը և արտասահմանում ու Ռուսաստանում սովորող մի շարք հայ ուսանողներ ձեռնարկում են Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի աշխատությունների թարգմանությունը։ 1887 թ. Գ. Ղարաջյանը ֆրանսերենից (Գ. Պլեխանովի ռուսերեն թարգմանության հետ համեմատելով) հայերեն է թարգմանում Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»՝ կոմունիզմի «երգ երգուցը» և ռուսերենից՝ Սիմոն (Շիմոն) Դիկշտեյնի «Ուժ ինչով է ապրում» գրքուկը։ Մարքսիզմի անխոնջ պրոպագանդիստ Դիկշտեյնը, հենվելով Կ. Մարքսի «Կապիտալի» նյութերի և դիտական եղրահանգումների վրա, հանրամատչելի էնով քննություն է առնում արտադրության հասարակական բնույթի և աշխատանքի բաժանման հարցերը, պարզաբանում հալելիք արժեքի տեսությունը, բանվոր դասակարգի պատմական դերը։

Քանի որ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և Ս. Դիկշտեյնի «Ուժ ինչով է ապրում» գրքուկը «Աշխատանքի ազատագրության» խմբի հրատարակությանը էին լույս տեսել, Գ. Ղարաջյանը դիմում է Գ. Պլեխանովին՝ հայերեն հրատարակության համար թույլտվություն ստանալու։ Գեորգի Վալենտինովիչ Պլեխանովը պարզաբանում է, որ «Աշխատանքի ազատագրության» խումբը ինքն է շահագրգռված նման հրատարակությունների ճակատագրով, ուստի նման քայլերը խրախուսելի են։ 1887 թ. և ոչ թե 1892-ին, ինչպես իր «Գիրք որ դարեր է ապրում» աշխատությունում (Երևան, 1968, էջ 259) գրել է Ա. Վ. Ուրոսևան, ժնկում հայերեն լույս է տեսնում «Ուժ ինչով է ապրում» գրքուկը, իսկ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» թարգմանությունը մի հոգովածի հետ, «Նուբար» ծածկանվամբ, ուղարկվում է Մարսել, «Արմենիա» թերթին՝ հրատարակելու համար։ Նյութի ընդարձակության պատճառով «Արմենիան» «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» Գ. Ղարաջյանի թարգմանությունը չի հրատարակել, բայց խորհուրդ է տվել այն տպագրել առանձին գրքուկով։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն առաջին հրատարակության փաստին անդրադարձել է Ֆ. էնգելսը, 1888 թ. հունվարի 30-ին (տե՛ս «Մանիֆեստի» նույն թվականի անգլերեն հրատարակության առաջաբանը) և 1890 թ. մայիսի 1-ին (տե՛ս գերմաներեն հրատարակության առաջաբանը)։ «Հայերեն թարգմանությունը, — գրել է Ֆ. էնգելսը, — որ մի քանի ամիս առաջ (1877 թ. — ի.) պետք է տպագրվեր Կոստանդնուպոլսում, ինչպես ինձ հաղորդել են, լույս չտեսավ այն պատճառով միայն, որ հրատարակչը վախեցել է Մարքսի անունը կրող գիրքը լույս ընծայել, իսկ թարգմանիչը չի համաձայնել «Մանիֆեստը» ներկայացնել որպես իր աշխատությունը»։

1888 թ. հունվարի 30-ի հայկական հրատարակության առթիվ Ֆ. էնգելսի առաված այս տեղեկությունը, «Արմենիայի» վերոհիշյալ առաջադրությունը և արխիվային որոշ նյութեր հիմք են տվել մեզ եզրակացնելու, որ Կոստանդնուպոլսի հրատարակչի ձեռքն էր ընկել «Մանիֆեստի» Գ. Ղարաջյանի կատարած թարգմանությունը։

Կ. Մարքսի աշխատությունների հայերեն թարգմանությունների գործում երախտիք ունի նաև 1880-ական թթ. հայ ազգային նարոդնիկների շարքերից ելած սոցիալիստ Հովսեփ Աթաբեկյանցը։ 1890-ական թթ. նա առ-

5 Գ. Ղարաջյան. Հեղափոխականի հիշատակարանը (ձեռագիր). մաս 2, էջ 41 (տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին առնթյուն մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4051, ց. 1, գ. 81)։

6 Կ. Մարքս և Ֆ. էնգելս. Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, էջ 27, 36։

տասնամյակում մոտիկից հաղորդակցվում է մարքսիզմին, հնարավորություն ստանում անձամբ ծանոթանալու Կ. Կաուցկու, Կ. Ֆետկինի և այլ գործիչներին հետ, լսելու Ա. Բերեյի, Վ. Լիբկնեխտի և այլոց ելույթները։ Աթաբեկյանցը ուսումնասիրում է մարքսիզմը, տարվում գիտական սոցիալիզմի գաղափարներով։ Իտալիայում առիթ է ունեցել ծանոթանալու Տուրատիի և 1894 թ. Սիցիլիայի գյուղացիական շարժման ղեկավարներին՝ Դեֆիլլեի, Բարբատոյի և այլոց հետ։

1893—94 թթ. Շուտովարդում նա իր փոքրամիջ համախոհների հետ գերմաներենից հայերեն է թարգմանում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և Ֆ. էնգելսի «Գիտական սոցիալիզմը» («Սոցիալիզմի պարզացումը ուսուպիայից դեպի պրոլետարիատ») աշխատությունը։ «Մանիֆեստի» հայերեն թարգմանությունը հրատարակության համար առաջարան ստանալու ակնկալությամբ 1894 թ. նոյեմբերի 1-ին Հ. Աթաբեկյանցը նամակով դիմում է Ֆ. էնգելսին։ Նամակում ասված է. «Հայերեն լեզվով «Կոմունիստական մանիֆեստի» հրատարակությունը, որի մասին Դուք խոսում եք իրրե տարօրինակ երկրպագության» «Մանիֆեստի» գերմաներեն հինգերորդ հրատարակության երրորդ նախաբանում, շուտով պետք է լինի և կլինի կատարված փաստ։ Չնայած որոշ ռժմարությունների, որ ներկայացնում է «Մանիֆեստի» հայերեն լեզվով թարգմանելը, բայց և այնպես դեռևս հաղթահարված են, թարգմանության մեջ մենք աշխատել ենք թույլ չտալ և ոչ մի անպատշաճություն, ամենուր խստորեն հետևելով գերմաներեն բնագրին։ «Մանիֆեստի» թարգմանությունը բոլոր երեք նախաբաններով հանդերձ, որոնց կկցվի նաև Ինտերնացիոնալի կանոնադրությունը՝ արդեն լիովին պատշաճ է տպագրության և սպասում է միայն Ձեր թույլատվությանը։ Եթե Դուք այնքան բարի կգտնվեք, որպեսզի «Մանիֆեստի» մեր հրատարակության առթիվ գեթ մի քանի ջերմ, սրտամոտ խոսքեր գրեք, ապա մենք Ձեզ շատ և շատ երախտապարտ կլինենք։ Մենք դիմում ենք Ձեզ այս խնդրով, գիտենալով, որ Ձեր խոսքերը անհրաժեշտ ընթացք կտան նոր գործին՝ սոցիալիստական գաղափարների պրոպագանդանր հայ ժողովրդի՝ Փոքր Ասիայի թերակս ամենակուլտուրական ներկայացուցչի մեջ, որը արդեն տասը տարուց ավելի է, որ ընդգրկվել է հեղափոխական շարժման ոլորտը...»⁷։

Հ. Աթաբեկյանցը այնուհետև համառոտակի շարադրում է հայ ժողովրդի անցած ուղին, պատմում նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրության մասին։ «Մենք հետևում ենք «Կոմունիստական մանիֆեստի» խոսքերին, — գրել է Հ. Աթաբեկյանցը. — որոնք մեզ մեր դերի համար բխավոր ծիրն են նշում՝ օժանդակել «ամեն մի հեղափոխական շարժման» ընդդեմ գոյություն ունեցող հասարակական և քաղաքական հարաբերությունների», հասկանալի է, անտես չանելով հեղափոխական շարժման ասպարան։

Պրոպագանդայի համար «Կոմունիստական մանիֆեստը» մենք համարում ենք լավագույն ստեղծագործություններից մեկը»⁸։

1894 թ. նոյեմբերի 23-ին Ֆ. էնգելսը Հ. Աթաբեկյանցին պատասխանում է նամակով, շնորհակալություն հայտնում «Մանիֆեստի» հայերեն թարգմանության համար և նշում, որ չի կարող առաջաբան գրել, և դա այն պատճառաբանությամբ, որ «ինձ համար դժվար է գրել որևէ բան, որ նախատեսված է հրատարակել այն լեզվով, որ ես չեմ հասկանում»։ Բայց, օգտվելով առիթից, արտահայտում է իր դրական վերաբերմունքը հայ ժողովրդի աշխատանքային ազատագրման գաղափարներին⁹։

1893—95 թթ. ղգալի աշխատանք կատարվեց մարքսիստական գրականության հայերեն թարգմանության ասպարեզում։ Թարգմանվում և հրատարակ-

⁷ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3: Տե՛ս նաև Խ. Հ. Խարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ.—1904 թ.), գիրք առաջին, Երևան, 1967, էջ 203—208։

⁸ Նույն տեղում։

⁹ Տե՛ս К. Маркс, Ф. Энгельс. Сочинения. II изд., т. 39, с. 270—271.

վում են Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» երկու զրուխները, Կ. Մարքսի «Ինչ է աշխատանքի վարձը», Ֆ. էնգելսի «Գիտական սոցիալիզմը», Ֆ. Լասսալի «Սահմանադրության էությունը», Ս. Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում» (երկրորդ հրատարակություն), Պ. Լաֆարդի «Իրավունք ծուլանալու» և ուրիշ այլ աշխատություններ։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» առաջին երկու զրուխները Մարո Վարդանյան-Նաղարեկյանի թարգմանությամբ (թարգմանությունը կատարվել է Ավետիս Նաղարեկյանի հետ) 1894 թ. հրատարակվել են հրեշակյան «Գողգոթա» հանդեսի հունիս-սեպտեմբերյան համարներում։ «Գողգոթա» «Մանիֆեստի» թարգմանության առթիվ ծանոթագրել էր. «Կոմունական (համայնական) կուսակցության մանիֆեստը (հայտարարությունը), որ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ էնգելսի մյուս զրուխների հետ դեռ 1848 թ. հիմք դրեց դիտական սոցիալիզմին՝ տնտեսական ու սոցիալիստական գրականության ամենանշանավոր փառքերից մեկն է։ Այդ «Մանիֆեստի» հրատարակությամբ սկսվեց դիտության խորին քննադատությունը նախկին և ներկա անտեսական-հասարակական կարգերի մասին»¹⁰, Ավ. Նաղարեկյանի թարգմանությամբ լույս տեսավ նաև Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության մի դրուխը։

Վիեննայում 1894 թ. հայերեն լեզվով լույս է տեսնում Ֆ. էնգելսի «Գիտական սոցիալիզմ» («Սոցիալիզմի վարդապետը ուտոպիայից դեպի դիտություն») աշխատությունը։ Ավետիս Նաղարեկյանը իր ինքնակենսագրական հուշերում գրել է, որ անձամբ ծանոթ էր Ֆ. էնգելսին, օգտվել է նրա հարուստ գրադարանից։

Ավ. Նաղարեկյանը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» նոր թարգմանությունը ևս ներկայացրել է Ֆ. էնգելսին՝ ծանոթանալու և, հավանական է, առաջաբան ստանալու միտումով։ 1894 թ. դեկտեմբերի 29-ին Կ. Մարքսի դստեր՝ Լաուրա Լաֆարդին ուղարկած նամակում Ֆ. էնգելսը գրել է. «Ես հենց նոր ստացա («Մանիֆեստի») հայերեն քաղցմանությունը»։ Դա, ամենայն հավանականությամբ, Ավետիս և Մարո Նաղարեկյանների թարգմանությունն էր։ Հակված ենք կառնելու, որ Ֆ. էնգելսը Ա. Նաղարեկյանին ևս պատասխան նամակ է գրել. այս հարցը, սակայն, կարոտ է ուսումնասիրության։

Կ. Մարքսի աշխատությունների թարգմանությունների, նրա ուսմունքի տարածման գործում նշանակալի էր Գերմանիայում սովորող, հեղափոխական տրամադրություններով տոգորված հայ ուսանողների, մասնավորապես «Մատերիալիստական րեկերության» առանձին անդամների՝ Սարգիս Կասյանի, Հակոբ Հովհաննիսյանի և այլոց աշխատանքը։ Նրանց «Մարքսը և մարքսիզմը», «Մասնավոր սեփականության առաջացման հիմքերը», «Դարվինիզմը և սոցիալիզմը» ու այլ թեմաներով ընդարձակ ռեֆերատներն ու զեկուցումները, որ կառուցված էին Կ. Մարքսի երկերի հիման վրա, իսկ առանձին դեպքերում էլ գրանց թարգմանությունն էին, գրա առհավատչյան են։

Անցյալ դարի 90-ական թթ. «Մուղն», «Տարաղ», «Մշակ» և այլ պարբերականներում քաղվածքներ էին տպագրվում Կ. Մարքսի աշխատություններից։ Գրաքննչական նկատառումներով հաճախ Կ. Մարքսի անունը չէր տրվում, այլ զրվում էր՝ «գերմանացի մեծ տնտեսագետը», «սոցիալիզմի պատրիարքը»։

Հարկավոր է նշել նաև այն իրողությունը, որ Կ. Մարքսն իր աշխատություններում երբեմն անդրադարձել է նաև Հայաստանին։ Նա, օրինակ, ցույց է տվել, որ սովետական Թուրքիայի ռադաֆեուզական կարգերը արգելափակում են օսմանյան տիրապետության տակ գտնվող հուն, սլավոն, հայ և այլ օղոսկորների առաջադիմությունը։ Տակալին 1850-ական թթ. Ֆ. էնգելսը առաջադրել է թուրքական դեպոտիզմի տապալման և քրիստոնեական աղատ, անկախ պետությունների ստեղծման» հարցը, իսկ 1894 թ. նոյեմբերին Հ. Արթուրյանի գրած նամակում մարգարեաբար կանխատեսում էր հայ ժողովրդի աղաքագրության միակ ճիշտ ուղին՝ այն կապելով ռուսական ցարիզմի

¹⁰ Տե՛ս «Դադափար». 1894, № 1։

և թուրքական սուլթանիզմի տապալման հետ: Մարքսիստները, ղեկավարվելով գիտական կոմունիզմի հիմնադիրների տեսությամբ, պարզաբանում էին, որ Ռուսաստանում պրոլետարիատի դասակարգային պայքարը կհասցնի ինքնակալության տապալմանը, իսկ թուրքիայում ժողովրդական հեղափոխությունը կոչնչացնի սուլթանական անարգ լուծը՝ ազատություն տալով ճնշված և հարստահարված ժողովուրդներին, այդ թվում և հայերին:

1890-ական թթ. կեսերից ավարտվում է Կ. Մարքսի աշխատությունների և մարքսիստական գրականության հայերեն թարգմանությունների առաջին փուլը: Սկսվում է մի նոր փուլ, դա ազգային-ազատագրական, բանվորական հեղափոխական շարժումները համառոտական պրոլետարիատի մարտական պայքարին լծորդելու, մարքսիստական գրականության հրատարակության ու տարածման, սոցիալիզմը բանվորական շարժմանը միաձուլելու ժամանակաշրջանն է: Մարքսիզմի զարգացման լենինյան փուլի սկզբնական շրջանում հայ հասարակական-քաղաքական կյանքում առաջացած տեղաշարժերը՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, բանվորական շարժման առաջացումը, ռուս առաջավոր պրոլետարիատի հեղափոխական ելույթները, բարենպաստ պայմաններ են ստեղծում հայ իրականության մեջ Կ. Մարքսի աշխատությունների թարգմանությունների և հրատարակությունների, մարքսիզմի տարածման համար: Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածումը լինելուստ է մի նոր փուլ: Ռուս մարքսիստների օգնությամբ Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում եռևեռ են գալիս մարքսիստական խմբերն ու խմբակները, լենինյան իսկրայական կազմակերպությունները, որոնք ունեին ինտերնացիոնալ բնույթ: Համատեղ ջանքերով նրանք ակտիվացնում են Կ. Մարքսի, Ֆ. էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հրատարակությունների դործը:

Կ. Մարքսի աշխատությունների հայերեն թարգմանություններն ու տարածումը իսկական առումով իրականացվել են մարքսիզմի զարգացման լենինյան փուլում, որը նույնպես ունի իր առաջընթացի աստիճանները: Ականավոր մարքսիստ-լենինյաններ Ստեփան Շահումյանը, Իսահակ Լալայանցը, Բողդան Կնունյանցը, Սուրեն Սպանդարյանը, Ալեքսանդր Մլասնիկյանը և ուրիշներ հիմք են դնում Կ. Մարքսի աշխատությունների և առհասարակ կոմունիստական գրականության հայերեն ճիտական հրատարակություններին: Առաջին մասնաշրջանում ուղղորդված կենտրոնում էին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հրատարակությունները, նրա թարգմանությունները: 1909—1902 թթ. «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն թարգմանության փորձեր են արվում ժնևում և Թիֆլիսում: Տեղական ուժերին եռանդուն օգնություն է ցույց տալիս ռուս ականավոր մարքսիստ Վեկտոր Կոռնաուսովսկին, որո տակավին 1893 թ. Ցյուրիխում հանդիպել և լսել էր Ֆ. էնգելսին, իսկ 1898—99-ին. սիբիրյան աքսորում՝ Նուրենսկոյում տեսել և խորհրդակցել էր Վ. Ի. Լենինի հետ: Նա ևս ռուսերեն է թարգմանել «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»:

1901 թ. Թիֆլիսում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» հայերեն է թարգմանվում ռուսերեն երկրորդ հրատարակությունից՝ Գ. Վ. Պլենսանովի 1882 թ. թարգմանությունից: Այն կատարել է բանվոր հեղափոխական, «Իսկրայի» թղթակից Հայկ Աղամյանը (Պոդոս Փիլիսոսյանը): Ժնևում «Մանիֆեստը» թարգմանվում է արևմտահայերեն՝ Պոլ Լաֆարգի ֆրանսերեն թարգմանությունից: Թարգմանիչը, ամենայն հավանականությամբ, Գարեգին Կուզիկյանն էր (Եսալեմ), որն այն ժամանակ աշխատում էր «Իսկրայի» խմբագրությունում և հրատարակեց «Բող ֆակտերը խոսեն» գրքով:

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին, 1898 թվականից ՌՍԴԲԿ անդամ Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի ղլխավորությամբ, արտասահմանում, ՌՍԴԲԿ Կենտկոմի հրատարակությունում իրականացնում է մարքսիստական գրականության հայերեն հրատարակությունը և առաքումը Կովկաս: ՌՍԴԲԿ II համագումարի որոշմամբ Կենտկոմին կից ստեղծված վրացերեն ու հայերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակու-

թյունների ժնեյան հանձնաժողովը Ստ. Շահումյանի ակտիվ ջանքերով հայերեն հրատարակում է Կ. Մարքսի, Ֆ. էնգելսի, Վ. Ի. Լենինի մի շարք աշխատություններ, այդ թվում՝ Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ», Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»¹¹ ևրկերը, Վ. Ի. Լենինի «Գյուղական շքավորությանը» դիրքը, «Ռուսաստանի պրոլետարիատին» պրոկլամացիան և այլ գործեր Կ. Մարքսի աշխատությունների հայերեն առաջին գիտական թարգմանությունը կատարել է Ստ. Շահումյանը 1904 թ. Շահումյանի թարգմանությամբ ժնեյում հրատարակված «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», ի տարբերություն նախորդ թարգմանությունների, ամբողջական է։ Հիրալի, ՌՍԴԲԿ Կենտկոմի հրատարակական մարմնի հայերեն թարգմանությունները մի նոր փուլ նշանավորեցին հալ իրականության մեջ մարքսիզմի տարածման, գիտական կոմունիզմի հիմնադիրների աշխատությունների հրատարակությունների գործում։ Թե որքան ուշադիր և հոգատու էր Վ. Ի. Լենինը հրատարակչական հանձնաժողովի և առհասարակ մարքսիստական հայերեն գրականության ստեղծման նկատմամբ, ցույց են առնում հանձնաժողովի նիստերին նրա մասնակցությունը, ելույթները և այն փաստը, որ հայերեն ու վրացերեն լույս տեսած գրքերի վերջին էջերում ամեն անգամ հիշատակվում էր Վ. Ի. Լենինի ժնեյան հասցեն։

Ստ. Շահումյանի թարգմանությամբ հրատարակված կոմունիզմի ծրագրային մեծ փաստաթուղթը մատչելի է դառնում հայ բոլշևիկներին, հեղափոխական գործիչներին, առաջավոր լոնգներին։ Բացի այդ, այն նշանակալից դեր խաղաց մարքսիստական գրականության հետագա թարգմանությունների գործում, հարստացրեց հայոց լեզվի քաղաքական բառապաշարը, լեզվաոճական հնարանները։ «Մանիֆեստի» ժնեյան հրատարակությունում լավ են դրսևում բնագրի ուժն ու ոճական առանձնահատկությունները 1906 թ. Բաքվում, Շահումյանի խմբագրությամբ, վերահրատարակվում է «Մանիֆեստը», իսկ Թիֆլիսում, Շահումյանի թարգմանությամբ, լույս է տեսնում Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» երկը (հրատ.՝ Ստ. Լիսիցյան և ընկ.)։

Կ. Մարքսի դարակազմիկ աշխատությունը «Կապիտալ» է, որի առաջին հատորը, 1009 օրինակ տպաքանակով, վերմաներեն լույս է տեսել 1867 թ. Համբուրգում։ «Կապիտալը» այն գիրքն է, որին Կ. Մարքսը, իր իսկ խոստովանությամբ, «դոհաբերեց առողջությունը, կյանքի երջանկությունը և ընտանիքը»։

Նախահոկտեմբերյան շրջանում «Կապիտալից» լայն քաղվածքներ են բերվել հայ պարբերական մամուլում։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին «Մուրճ» ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանը թարգմանել է «Կապիտալի» առաջին հատորը։ Նա Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և Ս. Կասյանի խմբագրությամբ հրատարակվող բոլշևիկյան «Նոր խոսք» թերթի 1906 թ. սեպտեմբերյան համարներում հայտարարություն է տպագրել քաժանորդագրություն անցկացնելու մասին։

«Հրավեր բաժանորդագրության. Կարլ Մարքս, Կապիտալ, հատոր I:

Հայերեն լիակատար թարգմանությամբ և հրատարակությամբ Ստրասբուրգի համալսարանի պետակ. և իրավաբ. գիտությունների դոկտոր Ավետիք Արասխանյանը։ Թարգմանությունը գերմաներեն բնագրից. որը կսկսվում է մոտ 800 խիտ տպած մեծադիր էջեր՝ բազմաթիվ և մեծածավալ ծանոթագրություններով և Մարքսի ու էնգելսի չորս առաջաբաններով։

¹¹ Կ. Մարքս, Վարձու աշխատանք և կապիտալ, ներածությամբ Ֆ. էնգելսի. թարգմ. գերմ. բնագրից, ժնեյ. Կ. Մարքս, Ֆ. էնգելս. Մանիֆեստ Կոմունիստական կուսակցության. թարգմ. գերմ. լոնգրից, ժնեյ. ՌՍԴԲԿ կուստպարան, 1904, 88 էջ։

Հատորը լույս է տեսնելու 7 պրակներով՝ համեմատ հասկանալի թվին, որոնք խորագրված են I. Ապրանք և փող (3 գլուխ), II. Փողի կապիտալ դառնալը (4 գլուխ), III. Բացարձակ հավելյալ արժեքի արտադրություն (5 գլ.), IV. Հարաբերական հավելյալ արժեքի արտադրություն (4 գլ.), V. Բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի արտադրություն (3 գլ.), VI. Աշխատանքի վարձը (4 գլ.), VII. Կապիտալի կուտակման պրոցեսը (5 գլ.):

ԾԱՆՈԹ. Գիրքը բացի թեորեական նուրբ անալիզներից, պարունակում է նաև տնտեսական զարգացման տեսություններ, զլխավորապես անգլիական կյանքից, որպես տնտեսական ամենավարգացած երկրից...»¹²:

Թեև տակավին հայտնի չէ Ա. Արասխանյանցի թարգմանության տեսության ձևակառուցողը, բայց փաստն ինքնին ուշագրավ է: Ա. Արասխանյանցը, չհանգնեց մարքսիզմին, սակայն իր կյանքի վերջին դիտակցում էր, որ «մարքսիզմը օրեցօր աճում և ամրապնդում է», որ «այժմ և սրանից հետո առանց Մարքսի անհնար է ո՛չ առաջացնել արմատական հեղափոխություն և ո՛չ էլ հասկանալ նրան»:

«Կապիտալի» հայերեն թարգմանության փորձերը հաջողությամբ պսակվեցին միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով նոր շրջան է սկսվում Կ. Մարքսի աշխատությունների թարգմանությունների և հրատարակությունների պատմության մեջ: Այդ գործը դրվում է սկսական հիմքերի վրա: 1917 թ. Բաքվում հին բոլշևիկ Աշոտ Հովհաննիսյանի թարգմանությամբ լույս տեսավ Կ. Մարքսի «Ի՛նչ պիտի դուրս գա նվրոպական Թուրքիայից» աշխատությունը: Նույն թվականին Թիֆլիսում հրատարակվեց «Կարլ Մարքսի «Պատմական մատերիալիզմը» և հավելյալ արժեքի թեորիան» գիրքը, որը հանրամատչելի ձևով ներկայացնում էր հարցի պատմությունը: Այն գերմաներենից թարգմանել էր տնտեսագետ Հայկ Ազատյանը: Նա է խմբագրել «Կապիտալի» հայերեն առաջին հրատարակությունները: 1918 թ. Մոսկվայում Հայկական գործերի կոմիտեի անդամ հրատարակությունը լույս ընծայեց «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» Գ. Պլեխանովի և հեղինակների առաջաբաններով: Թարգմանությունը բնագրից կատարել էր Պողոս Մակինցյանը: 1919 թ. Թիֆլիսում, Դրաստամատ Տեր-Սիմոնյանի թարգմանությամբ լույս տեսավ Ֆ. էնգելսի «Կոմունիզմի սկզբունքները» («Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» սկզբնական նախագիծը) աշխատությունը: Տեր-Սիմոնյանի գրչին է պատկանում «Կարլ Մարքս» հանրամատչելի գիրքը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո մեկը մյուսի ետևից լույս են տեսնում Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի շատ աշխատություններ, որոնք որոշիչ դեր են խաղում հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման, Հայաստանում գիտական կոմունիզմի գաղափարների տարածման գործում: 1920 թ. Աշ. Հովհաննիսյանի թարգմանությամբ լույս տեսավ «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» Գերմանիայում» գիրքը: Հայպետհրատն իր գործունեությունը սկսեց Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության հրատարակությամբ: Դա Ստ. Շահումյանի թարգմանությունն էր, որ լույս էր տեսել 1906 թ.:

Կ. Մարքսի կյանքի և հեղափոխական գործունեության, նրա ուսմունքի հետ հայ հեղափոխականներն ու աշխատավորները ծանոթացել են հայ անդրանիկ սոցիալիստների, իսկ հետո՝ հավատարիմ լենինյաններ Սս. Շահումյանի, Բ. Կոմունյանցի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի, Արշ. Մելիքյանի, Ս.

12 Տե՛ս «Նոր խոսք». Թիֆլիս, № 12, 5 սեպտեմբերի 1906:

Կասյանի, Ս. Հովսեփյանի և այլոց աշխատությունները, բոլշևիկյան հայ պարբերական մամուլի շնորհիվ 1903 թ. մայիսի 1-ին Լենինյան «Իսկրայի» № 35-ում հրապարակվեց Գ. Մ. Պլանանովի «Կարլ Մարքս» հոդվածը, որը թարգմանվեց և տպագրվեց «Պրոլետարիատի կոխիլը» թերթում 1907 թ. լույս տեսավ «Մայիսի մեկը» բրոշյուրը, որտեղ գետնգլած էին «Կարլ Մարքս», «Ֆրիդրիխ էնգելս» հոդվածները, նրանցում շարադրված էին մարքսիզմի դասականների Լեննատգրությունը, սոցիալիզմի սկզբունքները, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» պատմական դերն ու նշանակությունը 1910 թ. «Վերածնության» զրադարանի մոկինշով Փարիզում հայերեն լույս տեսավ Ս. Մուրադյանի (Սաֆո) «Կարլ Մարքս. Լեննատգրություն» գիրքը։ Ս. Մ. բացվում է Մարքսի դիմանկարով։

Կ. Մարքսի աշխատությունները վաղուց դարձել են հայ բնթերցողի սեղանի գրքեր, նրանց մեծ և իմաստուն խորհրդատուն։

ПЕРВЫЕ ПЕРЕВОДЫ ПРОИЗВЕДЕНИИ КАРЛА МАРКСА НА АРМЯНСКИЙ ЯЗЫК

(К 165-летию со дня рождения и 100-летию со дня смерти Маркса)

Доктор ист. наук Х. А. БАРСЕГЯН

(Резюме)

В статье рассматривается история первых переводов и изданий трудов К. Маркса на армянский язык, начиная с 1880-х годов по 1920-е. Показаны связи первых переводчиков— Г. Гараджяна (С. Т. Аркомед), И. Атабекянца, супругов Аветиса и Маро Назарбсканов—с группой «Освобождение труда», с Ф. Энгельсом, освещен вклад армянских большевиков в дело переводов и изданий сочинений Маркса на ленинском этапе развития марксизма. Особенно подчеркивается роль С. Г. Шаумяна в создании научных переводов на армянский язык трудов основоположника марксизма и марксистской литературы.